

Գանատայի դեսպան Անահիտ Յարութիւնեան իր հաւատարմագրերը յանձնեց
Գանատայի կառավարիչ Ժիլի Փայերին



Կարդալ էջ 3

Կեանքէն հեռացաւ Ս. Յակոբ Ազգային վարժարանի
նախկին փոխ տնօրէն
Յովհնէ Ծամկեան-Աֆարեանը



Կարդալ էջ 5

Արցախի մէջ հիմնուեցաւ
Հ.Մ.Ը.Մ.-ի 111-րդ մասնաճիւղը



Կարդալ էջ 3



Your Passport to Adventure.



2018 Passport TOURING

Selling start from
\$50,900*

LEAP ON IT!

HONDA GABRIEL

Book your test drive with
Kevorg Asadourian or Haig Khobassarian

7000, boul. Henri-Bourassa E.
Montréal, QC H1G 6C4
514 - 327 - 7777
www.hondagabriel.com



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



Դեապան Անահիտ Յարութիւնեանի ուղերձը Գանատայի հայ համայնքին

Սիրելի հայրենակիցներ,

Պատիւ ունեմ ձեզ տեղեկացնելու, որ յուլիսի 9-ին հաւատարմագրերս յանձնեցի Գանատայի ընդհանուր-նահանգապետ տիկ. Զուլի Պայետին, այսպիսով ստանձնելով Գանատայում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպանի պաշտօնը:

Հպարտութեամբ եւ մեծ պատասխանատուութեամբ կը ցանկանայի հաւաստիացնել ձեզ, որ իմ առաքելութիւնս միտուած է լինելու հայ-գանատական բարեկամական յարաբերութիւնների խորացմանը, երկկողմ փոխշահաւէտ համագործակցութեան ընդլայնմանը եւ գանատահայ համայնքի հետ աւանդական ջերմ եւ սերտ կապերի ամրապնդմանը:

Գանատայում ՀՀ դեսպանութեան հիմնադրման առաջին իսկ օրուանից դուք մշտապէս եղել էք դեսպանութեան կողքին, թեւ ու թիկունք դարձել Օթթաուա գործուղուած իմ բոլոր գործընկերներին: Լինելով Գանատայի օրինակելի քաղաքացիներ՝ դուք միաժամանակ սերունդէ սերունդ հպարտութեամբ փայփայել ու պահպանել էք հայոց լեզուն, հաւատքը, մշակոյթն ու ավանդութիւնները: Ձեր բոլոր նախաձեռնութիւններն ուղղուած են եղել Մայր Հայրենիքի հզօրացմանը եւ Արցախի ժողովուրդի ազատ եւ ինքնիշխան ապրելու իրաւունքի պաշտպանութեանը: Շնորհիւ ձեզ՝ հայի անունը Գանատայում նոյնացուած է բարեկրթութեան, աշխատասիրութեան եւ նուիրուածութեան հետ:

Լիայոյս եմ, որ իմ այս բարձր եւ միաժամանակ պատասխանատու առաքելութեան ողջ ընթացքում մենք միասնաբար կեանքի կը կոչենք մեր բոլոր նուիրական իղձերն ու նպատակները, կը շարունակենք աշխատել ուս-ուսի տուած՝ ի շահ հայ-գանատական յարաբերութիւնների բարգաւաճման, յանուն նոր Հայաստանի եւ Արցախի խաղաղութեան ու բարօրութեան:

Արցախի մէջ հիմնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի 111-րդ մասնաճիւղը

Հ.Մ.Ը.Մ.-ի երկրորդ հարիւրամեակի ծրագրերներուն առաջնահերթութիւնը Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղ հիմնելու անհրաժեշտութիւնն էր:

Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղ ունենալու գաղափարը տարիներու փափաք էր, սակայն զանազան պատճառներով աշխատանքի սկիզբը յետաձգուած էր: Միութեան 100ամեակի ձեռնարկներու ամբողջացումէն ետք, Կեդրոնական Վարչութեան աշխատանքները կեդրոնացան Արցախի մէջ մասնաճիւղի հիմնադրութեան վրայ: Խորհրդակցութիւններէ ետք, տեսակցութիւն մը տեղի ունեցաւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանի հետ, որուն ընթացքին արծարծուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Արցախի մասնաճիւղի հիմնադրութեան նպատակն ու հեռանկարները: Նախագահ Բակօ Սահակեան իր զբաղան համագործակցութեան պատրաստակամութիւնը փոխանցեց այս ուղղութեամբ:

Առ այդ, յաջորդող ամիսներու նախապատրաստական աշխատանքներէ ետք, 2 Յուլիս 2019ին Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւն մը գլխաւորութեամբ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտչեանին Արցախ մեկնեցան, ուր գումարուեցաւ Անդրանիկ Անդամական ժողով ու ընտրուեցաւ վարչութիւն բաղկացած հետեւեալ եղբայրներէն՝ Սեւակ Պօղոսեան, Դաւիթ Գրիգորեան, Արտակ Իշխանեան, Վրէժ Էսմէրեան եւ Վահրամ Յովսէփեան:

Զուգահեռաբար, Կեդրոնական Վարչութիւնը երկամսեայ ժամանակաշրջանով Արցախ գործուղեց իմբապետ մը, որ անհրաժեշտ գիտելիքները պիտի փոխանցէ նորակազմ իմբապետական կազմին:

Հ.Մ.Ը.Մ.-ի Արցախի Մեկուսի Շրջանի հիմնադրութիւնը պաշտօնապէս պիտի կատարուի Օգոստոս 2019ին, պետական ու ժողովրդային ներկայութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Գանատայի դեապան Անահիտ Յարութիւնեան իր հաւատարմագրերը յանձնեց Գանատայի կառավարիչ Ժիւլի Փայետին

Գանատայի մօտ ՀՀ դեսպան Անահիտ Յարութիւնեանը Յուլիս 9-ին իր հաւատարմագրերը յանձնեց Գանատայի կառավարիչ Ժիւլի Փայետին՝ Քեպէզ քաղաքին մէջ կայացած հանգիստուր արարողութեան մը ընթացքին:

Կառավարիչ Փայետի շնորհաւորեց Հայաստանի դեսպանը՝ պաշտօնի ստանձնման համար եւ յոյս հայտնեց, որ դեսպանը իր գործօն ներդրումը կ'ունենայ երկու երկիրներու յարաբերութիւններու ամրապնդման եւ խորացման գծով:

Անահիտ Յարութիւնեանը իր կարգին վերահաստատեց Հայաստանի իշխանութիւններու եւ հայ ժողովուրդի երախտագիտութիւնը Գանատայի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գծով, ինչպէս նաեւ Ապրիլ 24-ը Հայոց Ցեղասպանութեան յիշատակի օր հռչակելուն համար:

Արարողութեան ներկայ էին Գանատայի հայ համայնքը ներկայցնող պատուիրակութիւն մը, Բաբգէն Արք. Չարեան Սրբազան, Արգար եպս. Յովակիմեան Սրբազան, Թորոնթոյի մօտ ՀՀ հիւպատոս Վարուժան Լափոյեան: Ներկայ էր նաեւ դեսպանատան հիւպատոս Արա Մկրտչեան:

Արարողութենէն ետք ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան եւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տօնապետեան շնորհաւորեցին դեսպանը եւ Գանատայի ՀՅԴ մեծ ընտանիքին անունով վերահաստատեցին ամբողջական գորակցութիւնը՝ դեսպանատան աշխատանքներուն եւ դեսպանի առաքելութեան:

RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire 514 695 2555 - VIZUALIS.CA	Danièle Papazian, MSc. Courtier immobilier C 514.234.6799 dpapazian@remax-quebec.com www.remaxducartier.com RE/MAX DU CARTIER Agence immobilière 1290, rue Bernard Ouest, bureau 100 Outremont Qc H2V 1V9 T 514.271.2131
Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենեակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc., H4T 1W7 T: 514.903.3999	BOURQUE KABABEJIAN NOTAIRES NOTAIRES ET CONSEILLERS JURIDIQUES <i>Un rendez-vous avec le savoir-faire</i> GEORGE KABABEJIAN, LL.B., J.D., D.D.N. NOTAIRE ET CONSEILLER JURIDIQUE 465, RUE SAINT-JEAN BUREAU 801 MONTREAL, QUEBEC H2Y 2R6 TÉLÉPHONE : 514 842-4181, POSTE 248 FAX : 514 842-6808  /BKNOTAIRES	PGC autobody 1988 JACOB & JACOB BODY SHOP CAS D'ASSURANCES 6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6 Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487 jacobautobody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca
 Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	KORONA JOAILLIERS - 1964 - JEWELLERS Daniel Torosian 3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc. 514-274-5555 450-688-5515 korona.ca	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • Pension Plans Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com
FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	SOSIE DERNERSESIAN MORTGAGE AGENT LICENCE #M12001830 716 Gordon Baker Road, Unit 204A, Toronto Ontario M2H 3B4 CENTUM Microcap Wealth Solutions Inc. License # 12147 Mortgage programs for new comers to Canada New purchases Refinancing Second mortgages Self employed Low credit score Access to top lenders including private lenders 416.662.6650 cell centum.ca/sosie_demerseesian	Pharmacie Levon Benonian et Mher Koubelian Inc. Pharmaciens-propriétaires 3915, Boulevard Samson Laval, QC H7W 2G1 T 450 688-4111 F 450 681-5525 Lun. au vend. : 8h30 à 21h Sam. et dim. : 9h à 17h Infirmière (jeudi) : 8h30 à 15h LIVRAISON GRATUITE membre affilié à 

Համագգայինի «Արցախ» Պարարուեստի Ուսումնարանի եւ «Էրեբունի» պարախումբի տարեկան ելույթը

Վերջերս, Համագգայինի «Բագին» գրական հանդէսի թիւերէն մէկուն մէջ քանդակագործ Զաւէն Խտըշեանի հե-տեւեալ խօսքին հանդիպեցայ. «Իրական արուեստի գործ մը պէտք է ցնցէ դիտողը մէկ տասներորդ երկվայրկեանի մը մէջ իսկ»։ 22-23 Յունիս 2019-ի շաբաթա-վերջին Համագգայինի «Արցախ» Պա-րարուեստի Ուսումնարանի եւ «Էրեբունի» պարախումբի տարեկան ելույթը, պարերու հոյակապ բեմադրութեամբ, համաչափ ու զիրար ամբողջացնող շար-ժումներով, տարազներու հարստու-թեամբ, երաժշտութեան, լուսաւորումի եւ բեմայարգարումի համադրումով, առա-ջին իսկ երկվայրկեանէն թռիչք տուաւ հանդիսատեսի մտքին ու հոգւոյն, գրա-ւեց-տարաւ զինք զէպի գեղեցիկն ու նրբակերտը։

Կարմիր, թաւշեայ վարագոյրը մեզ կը բաժնէ յաջորդող պահէն։ Լոյսերը կը մարին, կողմնակի խօսակցութիւնը կը դադրի, ու յանկարծ, ծնծղաներու դօ-ղանջին հետ բարձր կը հնչէ աշխարհով մէկ բեմեր թնդացնող «Երեւան-Էրեբու-նի»ն, ջերմ ալիք մը սահեցնելով իրանէս վար։ Մինչ երաժշտութիւնը կը շարու-նակուի, գլուխները մէկ առ մէկ զէպի ետեւ կը դառնան. «Համագգային» թա-տերասրահի զոյգ դռներէն մուտք գոր-ծած պարմանուհիներ, նուաճ գոյնով պատուած, իւրաքանչիւրը զոյգ ձեռքով մոմակալ մը բռնած, յամրաքայլ զէպի բեմ կ'ուղղուին։ Բեմի վարագոյրը հան-դարտօրէն կը բացուի, հանդիսատեսին առջեւ պարզելով «Էրեբունի» պարա-խումբի տարբերանշանը, չրջապատուած

քարակերտ քանդակներու մեծկակ տպագրութեամբ։ Բեմահարթակին վրայ սահող լուսաճաճանչ քայլերու շորորը կ'առաջնորդէ մեզ զէպի լոյսի հայրե-նիք։

Ու կը հնչէ զուռնան. Արա Գէ-որգեանի «Արտաշատ»ն է՝ պարի հրա-ւիրելով «Էրեբունի»ն, որ խանդավառ ու ինքնավստահ շարժումներով հանդէս կու գայ, հաւաստիացնելով անգամ մը եւս, որ «Հի յաղթի ոչինչ այն հին ժո-ղովրդին, որ այս Զանքով ու այս կամ-քով պարել գիտի»։

Համագգայինի «Գլաճոր» մաս-նաճիւղի վարչական ներկայացուցիչ Մարիա Գարակէօզեանի բացման խօս-քին կը յաջորդէ «Արցախ» Ուսումնա-րանի փոքրերու Ա. խումբը. «Ճուտիկ-ներ»ը իրենց քունէն կ'արթննան ու դեղին ծաւալուն փէշերով, համաժամա-նակ ու մանրիկ քայլերով, մատիկներու շարժումներով ու ժպտուն աչուկներով կը խլեն մեր հոգիները։ Կ'անցնինք զէ-պի «Արցախ»ի մեծերը. «Կուռնիկներ»ը իրենց մայր կուռնիկին առաջնորդու-թեամբ ձեռքի այնքան նուրբ շարժում-ներով ու սահուն քայլերով կը գրաւեն բեմը. միտքս դարձեալ էմինն է՝ «...աչքդ ուր թեքուեր՝ դուր էր գա-լիս...»։

Կը յաջորդէ «Արցախ»ի փոքրերու Գ. խումբը. «Կինտոներ»ը համարձակ են, զարդարուն անձրեւանոցներու ներ-քեւ՝ խանդավառ են քայլերը, խօսուն են զէմքերը։ «Կինտոներ»էն ետք մեզ կը դիմաւորեն «Սեւ աչեր»ը, ջուլթա-կահար Յովհաննէս Մուպալջտի կատա-



րողութեամբ. ու կը քակուի յուշերու կծիկը, կը թեւածենք զէպի «Յուշեր»ու երազային աշխարհ «Էրեբունի»ի եւ «Արցախ»ի (մեծերու) աղջիկներու հոյա-կապ կատարումով։ Յուշերէն կը սթա-փինք, «Էրեբունի»էն Դաւիթ Մանուկ-եանի ու Հրակ Գարամարտեանի «Ջուռ-նի տրնգի» կտրուկ շարժումներու առոյգ պարով։ Պահ մը կ'անջատուինք հայկա-կանէն. «Էրեբունի»ի երկարամեայ ան-դամներէն Լանա Տէր Պետրոսեանն է բե-մահարթակին վրայ. Լանայի սպանական պարի կենսալից կատարումը կը տպաւորէ հանդիսատեսը։

Վրայ կը հասնին լուսաշող զէմքե-րով Փոքրեր Բ. խումբի բողբոջները, ծաղկաւէտ «Գարուն»ը աւետելով. իսկ գարնան արեւով ջերմացած ի՞նչ կայ աւելի հարազատ, քան մեր «Քոչարի»ն։ «Էրեբունի»ն է դարձեալ բեմահարթակին վրայ. առնական շարժումներով աղջիկ ու տղայ կը թնդացնեն սրահը ծափեր պոկե-լով աւարտին։ Գարնան բոյրը կը շարու-նակուի «Բալենի»ի նուրբ ներկայացու-մով. հերթը Պատանիներու Բ. խումբինն է, կարմիր, ծաղիկներով զարդարուն տա-րազներով պարարտ բալենին կը գրաւէ հանդիսատեսը, իսկ Մեծերու խումբի «Տօնական պար»ը տօնախմբութեան մը ցնծութեամբ կը պատէ գայն։ Այնքան չքնաղ են հոգեհարազատ «Տաւիղ»ի մենակատարները՝ Վանի Եագուպեանը, Մարիա Մանուկեանը եւ Լանա Տէր Պետ-րոսեանը. այնքան նրբաճաշակ է բեմադ-րութիւնը. հիացած ենք։

Պատանիներու Ա. խումբի «Կատակ պար»ով յառաջացած խանդը կը շարու-նակուի «Սուրբրու պար»ով, ջուլթակա-հար Յովհաննէս Մուպալջտի կատարո-ղութեամբ։ Քիչ անց, Մոկաց աշխարհ ենք. եկա՛ն եկա՛ն «Մոկաց հարսեր»ը։ Վեհ ու ծանրակշիռ կեցուածքով, հպարտ նայուածքով ու հրաշագեղ տարազներով կը յայտնուին բեմահարթակին վրայ «Էրեբունի»ի եւ «Արցախ»ի մեծ խումբի աղջիկները, մենակատարութեամբ Ռու-պինա Սարգիսեանի։ Երաժշտութիւնը յաւելեալ թափ կ'առնէ բոլորին սիրելի

«Շալախօ»ով, մենակատարն է Մեղեդի Կոստանեան՝ որդան կարմիրով պարուը-ուած։ «Ախալցխա»ի մէջ եւս կը տես-նենք հպարտ ու հաստատակամ հայուհին, թաւշեայ տարագի մէջ զուսպ շարժում-ներով, մենակատարութեամբ՝ Մարիա Մանուկեանի (Շաբաթ), Լանա Տէր Պետ-րոսեանի (Կիրակի)։ Զաւախքի հայրենի հողերէն կը սաւառնինք զէպի հերոսա-կան «Ղարաբաղ», ուր «Էրեբունի»ի տղաքն ու թաւշեայ, ոսկեզօծ տարազը հագին՝ մենակատար Միլա Գուրճաքեանը Արցախի ոգին կը փոխանցեն հանդիսա-տեսին։

Մերթ ընդ մերթ Մարիա Գարակէ-օզեանի բեմական խօսքերով՝ օրուան յայտագիրը կը հասնի իր աւարտին։ Փա-կումն է. 130 հաշուող պարողները խումբ առ խումբ կը յառաջանան զէպի բեմ, ջերմ ծափեր խլելով բոլորէն. յատուկ գնահատանքի կ'արժանանան Էրեբունիի անդամները։ Հանդիսատեսը ոտքի է։

Ի հարկէ, որեւէ յաջող նախաձեռ-նութեան ետին կան ժրաշան ձեռքեր. այս պարագային՝ վարչական ներկայացուցի-չը, պարարուեստի յանձնախումբը, խումբերու հսկիչները, բեմի ետին գործող օժանդակ անդամներն ու բեմայարգա-րումի հեղինակ արուեստագէտ Արա Տէր Յարութիւնեանը. բոլորին կ'ըսենք՝ ձեր վարձքը կատար։

Հաւանաբար շատ բան կարելի է գրել տաղանդաւոր, վաստակաշատ պա-րուսոյց, գեղարուեստական ղեկավար եւ բեմադրիչ Նելլի Կարապետեանի մասին, որուն կը պարտինք այս բարձրորակ ելույթին յաջողութիւնը. որակին հանդէպ իր անխախտ ու անսակարկ համոզումը ակնյայտ է։ Հմուտ պարուսոյցի մը ար-ժանիքներէն մէկը նաեւ իր ունեցած ատաղձէն լաւագոյնը քաղելու յաջողու-թեան մէջ է։ Բոլոր շնորհաւորանքներուն դիմաց, համեստաբար «ես բան չեմ արել» կը լսենք. այսինքն՝ սա տակաւին առաջին քայլն է. իսկ մենք, ըմբոշխնելէ ետք քանի մը ամսուան հունձքը՝ ան-համբեր կը սպասենք գալիքին։

Թամար Տօնապետեան Գուգուեան

«Անահիտ» երաժշտանոցի ամալերջի համերգը



Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, 20 Յունիս 2019-ին, Թորոնթոյի մէջ տեղի ունեցաւ «Անահիտ» երաժշտանոցի տարեկան համերգը, որ նուիրուած էր Հայաստանի Նիկողայոս Տիգրանեանի անուան տեսողութեան խանգարումներ ունեցող երեխանե-րու թիւ 14 յատուկ դպրոցին։

Իր բացման խօսքին մէջ Անահիտ Կուստուգեան նշեց. «Մենք ունեցած ենք այլ համերգներ՝ օգնելու Հայաստանի մէջ մանկատուներու (orphanages). մեր նպատակն է անգամ մը եւս յիշեցնել մարդոց՝ գնահատել կեանքի արժէքները եւ օգտակար դառ-նալ այն անձանց, որոնք կարիքաւոր են»։

Ներկաներու ուրախ տրամադրութեամբ սկսաւ համերգը։

Շարունակաբար, երգերով ու նուագով բեմ բարձրացան հետեւեալ աշակերտնե-րը՝ Արեգ Մուրատեան, Արի Մուրատեան, Քրիսթինա Կասիմով, Լեյլա Թրաթթիներ, Ալ-իանա Աթթա, Փիթըր Էլ Պուրի, Անտրու Փլեզա, Վիքթորիա Քոլեցի, Տիանա Պասա-րապ, Արազ Քարշաֆեան, Գամիլլա եւ Գարինա Գանտահարեան, Քալէպ Քէյն, Ար-ջուն Զինտալ, Ճուլեան Լի, Էմիլի Պալասանեան, Նուր Ալի եւ Իգապէլ Լի։

Համերգի աւարտին, Անահիտ Կուստուգեան միանալով իր աշակերտներուն ելույ-թին, կատարեց իր յորինած երգերէն մէկը՝ «Աղօթք» եւ «Could I have this dance» երգերը, իր իսկ նուագակցութեամբ։

Բոլոր կատարումները հաճելի եւ սրտայոյգ էին։ Համերգը աւարտեցաւ բուռն ծափահարութեամբ եւ ներկաներու ուրախ տրամադրութեամբ։

Անահիտ Կուստուգեան իր հմայքով եւ տքնաշան աշխատանքով 24 տարիներէ ի վեր կը ձգտի եւ կ'աշխատի մեր պատանիներուն փոխանցել դարերու սիրանքներէն եւ եղեւնի ճանապարհէն մեզի հասած հայ երգը։

**«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի
հետեւեալ կայաններուն եւ ժամերուն՝**

Videotron: HD838 կամ SD238	Երեքշաբթի - երեկոյեան ժամը 9:00-ին (առաջին սփռում) Չորեքշաբթի - կեսօրէ ետք ժամը 2:00-ին Չինգաբթի - երեկոյեան ժամը 6:00-ին Շաբաթ - առաւօտեան ժամը 7:00-ին, եւ երեկոյեան ժամը 11:00-ին Կիբակի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կէ. ժամը 4:00-ին Երկուշաբթի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կէ. ժամը 5:00-ին
Bell Fibe: HD1216 կամ SD216	Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca Նախատուութիւն կայքի է pulsz www.youcaring.com/hayhorizon

Դասախօսություն «Թուրքիոյ հայ համայնքը այսօր» թեմայով

Հինգշաբթի, 4 Յուլիս 2019-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Պոլսահայ Միութեան կեդրոնէն ներս, Օքսֆորտ համալսարանի Արեւելագիտութեան Ամպլոնի դասախօս դոկտ. Հրաչ Զիլին-կիրեան դասախօսեց Թուրքիոյ Հայ համայնքին մասին, կազմակերպութեամբ Քեպէգի Հայ Համայնքի Միացեալ Մարմինն, ներկայութեամբ Մոնթրէալի Հայ գաղութի մշակութային միութիւններու ներկայացուցիչներուն եւ հոծ բազմութեան:

Զեռնարկին բացումը կատարեց տիար Ռաֆֆի Երէցեան, որ ներկայացուց դասախօսին հակիրճ կենսագրութիւնը, ապա զինք բեմ հրաւիրեց:

Դոկտ. Զիլինկիրեան սահիկներու ցուցադրութեամբ, օրինակներով եւ վիճակագրական թիւեր ներկայացնելով՝ յստակ պատկերացում փոխանցեց Թուրքիոյ մէջ փոքրամասնութիւններուն եւ յատկապէս՝ հայերուն իրավիճակին մասին:

Դասախօսը նախ կարճ տեսերիզով մը Թուրքիոյ առօրեայ կեանքէն պատկեր մը ցուցադրեց, որ կը բացայայտէ Թուրք ժողովուրդին հակահայ կեցուածքը:

Ապա սկսելով պետութեան կողմէ բանեցուած անհատական խտրականութենէն՝ ան յայտնեց. «Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադրութեան օրէն իսկ (1923) անհատական խտրականութիւն գոյութիւն ունեցած է՝ կառավարութեան տոմարներուն մէջ գաղտնաթիւ օգտագործելով ազգային եւ կրօնական փոքրամասնութիւններուն համար. օրինակ՝ յոյները կը կրէին թիւ մէկը, հայերը՝ երկուքը, հրեաները՝ թիւ երեքը, իսկ ասորիները՝ չորսը: Հետեւեալ երբ նշեալ փոքրամասնութիւններուն պատկանող անձեր գործի դիմէին, անձագիրներէն կը գիտցուէր անոնց պատկանելութիւնը: Այսպիսով անոնք իրենց քաղաքացիական հաւասար իրաւունքները չէին վայելեր առօրեայ կեանքին մէջ, բանակին մէջ եւ այլուր: Այս գաղտնիքը բացայայտուած է միայն Հրանդ Տինքի դատավարութեան ժամանակ, 2014-ին»:

Անցնելով համայնքային ճնշումներուն, դոկտ. Զիլինկիրեան հետեւեալ օրինակը տուաւ. «1936 թուականին պետութիւնը պահանջեց փոքրամասնութիւններէն ներկայացնել իրենց կալուածներուն ցանկը: Բոլոր համայնքները ներկայացուցին այդ կալուածները, որոնց թիւը կը հասնէր 1500-ի (600-ը՝ հայերուն), այն յոյսով որ անոնք պիտի գրանցուին, մինչ կառավարութիւնը անմիջապէս պետականացուց զանոնք: Իսկ 1936 թուականէն ետք, համայնքներուն գնած կալուածներուն մասին պետութիւնը յայտարարեց, թէ իրաւասու-



թիւն չունին զանոնք սեփականացնելու, հետեւեալ բոլորը պետականացուց»:

Ան յայտնեց, թէ այսօր երբ թերթի մը մէջ կը կարդաք կալուածի մը վերագործին մասին, անոնք 1936 թուականէն առաջ պետականացուած կալուածներէն են, մինչ 1936-էն ետք գնուած կալուածները կը մնան իւրացուած պետութեան կողմէ:

Դասախօսը անդրադարձաւ նաեւ Պատրիարքական ընտրութիւններուն. «Պետութիւնը մէկ կողմէ կը յայտարարէ, թէ ինք միջամուխ չէ եկեղեցական ներքին հարցերուն, մինչ անդին արտօնութիւն չի տար, որ եկեղեցին ունենայ իր սահմանադրութիւնը, հետեւեալ իւրաքանչիւր ընտրութեան նախօրեակին ինք կը սահմանէ ընտրութեան կանոնագիրը», յայտնեց ան եւ անդրադարձաւ, թէ պատրիարքն ու պատրիարքութիւնը պետական օրինական ճանաչում չունին, եւ անոնց իրաւասութիւնները չափազանց սահմանափակ են:

Աւարտելով իր դասախօսութիւնը դոկտ. Հրաչ չեղտեց, թէ Թուրքիոյ մեր համայնքը հինէն ի վեր շարունակական ճնշումներու կ'ենթարկուի, բայց «Ուրքա՛ն ալ կառավարութիւնը փորձէ մաշեցնել համայնքի ուժն ու կենսունակութիւնը, որքան ալ փորձէ ջլատել մեր գործունէութիւնը, համայնքիս կառոյցներն ու անդամները անընդհատ պիտի պայքարին այդ ճնշումներուն դէմ եւ ոչ միայն տէր պիտի կանգնին մեր սեփականութիւններուն՝ հողերուն ու տարածքներուն, եւ քաղաքացիական իրաւունքներուն, այլեւ պիտի փորձեն ձեռք ձգել նո՛ր իրաւունքներ», ըսաւ ան:

Դասախօսութեան աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Յովիկ Կէտիկեան

Կեանքէն հեռացաւ Ս. Յակոբ Ազգային վարժարանի նախկին փոխ տնօրէն Յովինէ Ծամլեան-Աֆարեանը

Յուլիս 13-ին կեանքէն անժամանակ հեռացաւ Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի նախկին փոխ տնօրէն եւ «Հորիզոն»ի երկարամեայ աշխատակից Յովինէ Ծամլեան Աֆարեանը:

Յովինէ ծնած է 3 Ապրիլ 1961-ին, Պէյրութ: Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանին մէջ, ապա յաճախած է AUB համալսարանը եւ մասնագիտացած՝ քիմիագիտութեան մէջ:

1984-ին փոխադրուած է Գանատա, Մոնթրէալ, ուր շարունակած է իր ուսումը UdeM-ի մէջ՝ հաղորդակցութեան ապա կրթական բաժանմունքներուն դասընթացքներուն հետեւելով:

1991-ին ամուսնացած է Վիգէն Աֆարեանի հետ, եւ բախտաւորուած են դուստրով մը՝ Արեւիկ:

Մոնթրէալ հաստատուելէն անմիջապէս ետք, 1986-2016 պաշտօնավարած է Սուրբ Յակոբ Ազգային վարժարանին մէջ, նախ որպէս շաբաթօրեայի եւ ամէնօրեայի հայերէնի ուսուցչուհի, ապա որպէս փոխ տնօրէնուհի: 1995-2008 անխափան կերպով աշխատակցած է «Հորիզոն» շաբաթաթերթին «Գանատական Հորիզոն» եւ «Գանատահայ Հորիզոն» սիւնակներով, ինչպէս նաեւ 15 տարիէ ի վեր կը ղեկավարէր «Հայ կեդրոնի ձայն» ռատիոժամը:

Լիբանանի մէջ անդամակցած է ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միութեան եւ ՀՅԴ Զաւարեան ուսանողական միութեան, իսկ Գանատա փոխադրուելէն ետք եղած է ՀՅԴ Մոնթրէալի «Միհրան Փափազեան» կոմիտէի եւ Հայ Դատի յանձնախումբի անդամ, Կեդրոնական կոմիտէի գործավար եւ Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէի գործավար: Ան եղած է նաեւ հաւատաւոր ՀՕՄ-ուհի:

2004-ին, «Հորիզոն» շաբաթաթերթի 25-ամեակին, Յովինէ Ծամլեան Աֆարեան պարգեւատրուած է յատուկ յուշանուէրով մը՝ իր երկարատեւ կամաւոր աշխատակցութեան համար: 2003-ին, պարգեւատրուած է Ethnic Press Council of Canada-ի կողմէ՝ որպէս զանազան լրատուական աշխարհին մէջ ներդրում կատարած «Հորիզոն»ի լրագրող:

Յովինէն կնքեց իր մահկանացուն Շաբաթ, 13 Յուլիս 2019-ին, Sacre Cœur հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան: Տան կարգը տեղի ունեցաւ Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ մէջ, Նրեքշաբթի, 16 Յուլիսին, երեկոյեան ժամը 7:00-ին, եկեղեցւոյ կարգը՝ Չորեքշաբթի, 17 Յուլիսին, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, իսկ գերեզմանի կարգը՝ L'Espérance գերեզմանատան մէջ, Ste Dorothée:



Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ նոր կայքէջը՝
www.sourphagop.net



École arménienne Sourp Hagop
Սուրբ Յակոբ Ազգային վարժարան

Թափուր Պաշտօններ

2019-2020 դպրոցական տարեշրջանին համար Ս. Յակոբ Ազգային վարժարանը կարիք ունի ուսուցիչներու հետեւեալ պաշտօններուն համար:

Նախակրթարան

- Յայերէնի ուսուցիչ
- Ֆրանսերէնի դասատու

Երկրորդարան

- Յայերէնի դասատու
- Յայոց պատմութեան դասատու

Պահանջներ՝

- Թեպէզի կրթութեան նախադրութեան կողմէ դասաւանդման արտօնագիր կամ դասաւանդելու պաշտօնական իրաւագիր
- Ոչ հայերէն նիւթերու դասաւանդման համար, նաեւ՝ CEFRAN քննութեան յաջողութեան վկայագիր:

Enseignantes et enseignants recherchés Pour un milieu d'exception

L'École arménienne Sourp Hagop cherche à pourvoir quelques postes d'enseignantes ou d'enseignants au primaire et au secondaire.

Au primaire, l'École recherche des titulaires au 1^{er} cycle et au 3^e cycle et des enseignants de langue arménienne pour le 3^e cycle du primaire.

Au secondaire, l'École recherche des enseignantes et enseignants de langue et d'histoire arméniennes pour les 1^{er} et 2^e cycles du secondaire.

Certains de ces postes sont permanents; d'autres sont à pourvoir en remplacement temporaire pour l'année 2019-2020.

Qualifications requises

- Autorisation légale d'enseigner ou en voie d'obtention
- Réussite au Test de rendement en français écrit pour l'enseignement (TECFÉE).

Կրկնք ձեր դիմումը ներկայացնել միկնել 5 Օգոստոս 2019 կապ հաստատելով տնօրէնութեան հետ lory.abrakian@ecolesourphagop.com հասցէին:

Toute personne intéressée à poser sa candidature doit faire parvenir son curriculum vitae par courriel au plus tard le **5 août 2019**, à l'attention de Madame Lory Abrakian, directrice générale, à l'adresse suivante : lory.abrakian@ecolesourphagop.com

3408, RUE NADOP, MONTRÉAL (QUÉBEC) H4I 1P5 • ☎ (514) 332-1373
• www.ecolesourphagop.com • Courriel : direction@ecolesourphagop.com



Ուրախութեամբ կը յայտարարենք որ Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի «Տոհմիկ Օր»ը այս տարի ձօնուած է՝

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՒՆ

Զեռնարկը տեղի պիտի ունենայ
Շաբաթ 23 Նոյեմբեր 2019ին
Հայ Կեդրոնէն ներս

Կը խնդրուի յիսաչաճել
ՀՕՄի «Ռուբինա» Մասնաճիւղի
Տոհմիկ Օրուայ Յանձնախումբ
Թորոնթօ

ՄԱԿը Հայոց Ցեղասպանութեան Մասին Զգայացունց Հարցարան Մը Յղեց Թուրքիոյ

Երեսունչորս տարի առաջ, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) խորականութեան կանխարգիլման եւ փոքրամասնութիւններու պաշտպանութեան ենթաշանձնախումբը զեկոյց մը հաստատեց, որով Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցաւ իբրեւ ցեղասպանութեան դէպք։ Մինչեւ վերջեւ, ՄԱԿի մէջ ալլ գործունէութիւն չէ եղած այս հարցին վերաբերեալ։ Անսպասելիօրէն, 25 Մարտ 2019ին, գարմանալի նամակ մը յղուեցաւ Զուիցբերիոյ ժընեւ քաղաքին մէջ գործող ՄԱԿի մօտ Թուրքիոյ մնայուն ներկայացուցիչ գեսպան Սատիբ Արսլանի՝ ՄԱԿի երեք կառոյցներու ներկայացուցիչներուն կողմէ․ անոնք են՝ Պերնար Տուհայմ՝ Բռնի կամ հարկադրաբար անհետացած մարդոց հարցերու աշխատանքային խումբի զեկուցող նախագահ, Տէյլիտ Քէյ՝ Կործիքի եւ արտայայտութեան ազատութեան աջակցութեան եւ պաշտպանութեան հարցերու յատուկ զեկուցող եւ Ֆապիան Սալվիոլի՝ Ճշմարտութեան, արդարադատութեան, փոխհատուցման խրախուսման եւ չլրկնուելու երաշխիքներու հարցերու յատուկ զեկուցող։

ՄԱԿի միացեալ նամակին մէջ թուրք գեսպանէն կը խնդրուէր 60 օրուան ընթացքին պատասխանել հետեւեալ եօթը հարցումներուն․

«1. Կը խնդրենք տրամադրել որեւէ տեղեկութիւն եւ/կամ մեկնաբանութիւն(ներ), զորս դուք կրնաք ունենալ մեղադրանքներու վերաբերեալ՝ Թուրքիոյ վերագրուող խախտումները 1915–1923 թուականներու ողբերգական իրադարձութիւններուն, որոնք վնասած են հայ փոքրամասնութեան, եւ այդ դէպքերուն հետեւանքները՝ նշեալ բնակչութեան համար։

2. Ձերդ գերազանցութեան կառավարութեան կողմէ ինչպիսի՝ քաղաքականութիւն մշակուած է այս մեղադրանքներուն արձագանգելու համար։

3. Թուրքիոյ կողմէ ինչպիսի՝ միջոցներու ձեռնարկուած են իրողութիւնը պարզելու համար, ներառեալ 1915–1923 թուականներուն ընթացքին բռնի ներքին տեղահանութեան, կալանաւորման, արտադատական սպանութիւններու եւ հարկադրաբար անհետացման ենթարկուած հայերու ճակատագիրը կամ գտնուելու վայրը պարզելու համար։

4. Ինչպիսի՝ միջոցներու ձեռնարկուած է՝ ապահովելու համար այդ իրադարձութիւններուն մասին ճշմարտութիւնը իմանալու տուժածներու եւ, ընդհանուր առմամբ, հասարակութեան իրաւունքը, ինչպէս նաեւ ապահովելու համար արդարութեան եւ կրած վնասի հատուցման տուժածներու իրաւունքը։

5. Ինչպիսի՝ միջոցներու ձեռնարկուած է՝ այդ իրադարձութիւններուն իբրեւ հետեւանք զոհուած հայերու մարմինները, ըստ կարելւոյն, յայտնաբերելու համար։

6. Կը խնդրենք տեղեկութիւն տրամադրել՝ 2017ի օրէնսդրութեան հաստատման պատճառներուն մասին, որոնց հիմամբ օրէնսդիրներուն կ'արգիլուի յատակօրէն արտայայտուիլ։ Պարզաբանել, թէ ինչպէ՞ս կարելի է այս իրականութիւնը համատեղել մարդկային իրաւունքներուն վերաբերող միջազգային իրաւունքին հետ, մասնաւորաբար Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու մասին միջազգային դաշնագիրի 19րդ յօդուածին հետ։

7. Կը խնդրենք մանրամասն տեղեկութիւն տրամադրել՝ հայերու դէմ գործուած յանցանքներու մասին կատարուած յայտարարութիւններու համար մարդոց պատժելու նպատակով Քրէական օրէնսգրքի 301րդ յօդուածի կիրարկման դէպքերու վերաբերեալ»։

ՄԱԿի միացեալ նամակին մէջ մանրամասնօրէն նկարագրուած են հայերու դէմ իրականացած վայրագութիւնները. «1915–1923 թուականներուն Օսմանեան կայսրութիւնը եւ անոր յաջորդած Թուրքիոյ Հանրապետութիւնը, (որոնք) իրականացուցած են երկրի արեւելեան բաժինին մէջ ապրող հայ փոքրամասնու–

թեան զանգուածային տեղահանութեան քաղաքակա–նութիւն։ Այդ փոքրամասնութեան պատկանող հարիւր հազարաւոր մարդիկ (մօտաւորապէս 600 հազարէն մինչեւ 1 միլիոն 500 հազար) ենթարկուած են այդ քաղաքականութեան, ինչ որ յանգեցուցած է համատարած բռնութեան, այդ բնակչութեան դէմ։ Ըստ տեղեկութիւններու՝ հայերու բռնի արտաքսումը սկսած է Մարտ 1915ին, հիմնականին մէջ Անատոլիոյ, բայց նաեւ երկրի ալլ հատուածներուն մէջ։ Հայերը վռնտած են իրենց նախնիներու հողերէն։ 24 Ապրիլ 1915ի գիշերը Պոլսոյ մէջ ձերբակալեցին քաղաքական եւ մտաւորական հարիւրաւոր ղեկավարներ, իսկ հետագային զանոնք տեղափոխեցին ուրիշ վայրեր։ Հետեւանքը եղաւ այն, որ հայկական վերնախաւը գրեթէ ամբողջութեամբ ջնջուեցաւ։ Ասոր հետեւեցաւ ամբողջ հայ բնակչութեան դէմ ուղղուած համակարգուած քաղաքականութիւն իւրաքանչիւր նահանգի եւ վիլայէթի մէջ, պաշտօնական նպատակ ունենալով հայ բնակչութեան բռնի տեղահանութիւնը Անատոլիոյ արեւելեան նահանգնե–րէն՝ դէպի Հալէպ եւ սուրիական անապատներու մէջ գտնուող ճամբարները։ Հայերը ենթարկուեցան պարտադրուած երթերու։ Անոնց մեծ մասը, ենթադրաբար, հետզհետէ մահացաւ ուժասպառութենէ, սովէ, հիւանդութիւններէ կամ կոտորածէ, մինչ անոնց աճիւնները հիմնականին մէջ մնացին լքուած։ Տեղ հասնելով՝ ողջ մնացած քանի մը հոգին կը պահէին ճամբարներու մէջ, ուր եւ անոնք կրնային խոշտանգուիլ կամ արժանանալ դաժան, անմարդկային կամ արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերումի․ հետագային վերապրած–ներուն մեծ մասը սպաննեցին։ Գործընթացը շարունակուեցաւ մինչեւ 1923։

Կ'ենթադրուի, որ այս գործողութիւնները կրնային սահմանուիլ իբրեւ բռնի անհետացումներ, այն աստիճանի, որ․

1. Հայերը Թուրքիոյ մէջ ենթարկուած են ձերբակալութիւններու, բանտարկութիւններու կամ առեւանգումներու կամ ուրիշ ձեւով զրկուած են իրենց ազատութենէն․

2. Ըստ տեղեկութիւններու՝ այս գործողութիւնները վերագրուած են պաշտօնատար անձերու կամ կառավարութեան տարրեր ճիւղերու կամ մակարդակնե–րու․

3. Մինչեւ այսօր կառավարութիւնը չէ բացայայտած այդ մարդոց ճակատագիրը կամ գտնուելու վայրը»։

ՄԱԿի նամակին մէջ քննադատուած է նաեւ Թուրքիոյ ժխտողականութիւնը. «Նաեւ կը տեղեկացուի, որ Թուրքիա ոչ միայն կը մերժէ ճանչնալ այդ իրադարձութիւնները, ալլ նաեւ դիտաւորութեամբ ներգրաւուած է զոհերու ճակատագիրին կամ գտնուելու վայրին մասին ճշմարտութեան ժխտման եւ խոչընդոտման մէջ։ Թէեւ մենք չենք փափաքիլ կանխորոշել այդ մեղադրանքներուն ճշգրտութիւնը, մենք կը փափաքինք արտայայտել մեր անհանգստութիւնը՝ նշուած ժխտողականութեան եւ 1915–1923 թուականներուն հայերու բռնի տեղահանման համար ճշմարտութեան հաստատման եւ արդարութեան ապահովման համար յառաջընթացի բացակայութեան նկատմամբ, որ յանգեցուց վիթխարի տառապանքի եւ դաժան վերաբերումի ու մահուան։ Համապատասխան փաստերու հաստատման եւ ճանաչման յառաջընթացի բացակայութիւնը, ոչ միայն վնաս կը հասցնէ զոհերու եւ անոնց սերունդներու արժանապատուութեան, ալլեւ կրնայ խոչընդոտել յիշողութեան պահպանման եւ ճշմարտութեան հաստատման համար միջոցներու նախաձեռնելու հնարաւորութիւնը»։

17 Մայիս 2019ին, ՄԱԿի հարցապնդման 60 օրե–րուն ընթացքին, Թուրքիոյ գեսպանը արձագանգեց երեք էջնոց նամակով՝ նշելով, որ ՄԱԿի նամակը «ան–

պատասխան կը մնայ Թուրքիոյ կառավարութեան կողմէ»։ Դեսպան Արսլան նաեւ յայտարարեց, որ «իմ իշխանութիւնները բաւական չփոթած էին այդ հաղորդակցութենէն», զոր ան նկարագրեց իբրեւ «չարամիտ եւ քաղաքական գրգապատճառներով թելադրուած»։

ՄԱԿի նամակին յայտարարութիւնները ժխտելէ բացի, գեսպան Արսլան նաեւ վկայակոչեց ՄԱԿի գլխաւոր քարտուղար Պան Քի Մուներ եւ անոր մամլոյ խօսնակ Ֆարհան Հաքը՝ պնդելով, որ ՄԱԿը երբեք դիրքորոշում չէ ունեցած այն իրադարձութիւններուն մասին, որոնք տեղի ունեցած են ՄԱԿի ստեղծումէն առաջ։

Թէ՛ գլխաւոր քարտուղարը, թէ՛ անոր խօսնակը սխալ են, որովհետեւ ՄԱԿը յատուկ օր սահմանած է հրէական Ողջակիզումը յիշատակելու համար․ անիկա տեղի ունեցած էր 1945ին, ՄԱԿի հիմնադրութենէն առաջ։ Աւելին, ես հարցազրոյց ունեցած եմ Պան Քի Մունի խօսնակ Ֆարհան Հաքի հետ եւ անոր հարցուցած 1985ին ՄԱԿի ենթաշանձնախումբի Ցեղասպանութեան զեկոյցին մասին, որ ճանչցած է քանի մը ցեղասպանութիւններ, ներառեալ Հայոց Ցեղասպանութիւնը, ընդ որուն բոլորն ալ տեղի ունեցած են մինչեւ ՄԱԿի հիմնադրութիւնը։ Հաք ինծի ըսաւ, որ տեղեակ է ՄԱԿի ենթաշանձնախումբի Ցեղասպանութեան զեկոյցէն, սա–կայն ան ակնարկեց ՄԱԿի Գլխաւոր յանձնախումբին կողմէ ճանաչման բացակայութիւնը։

Աւելի՛ն․ հեղինակները ՄԱԿի նամակին հետ ներկայացուցած են Միջազգային մարդասիրական օրէնքէ յղումը, որուն մէջ կ'ըսուի․ «Անպատժելիութեան դէմ պայքարելու միջոցով մարդկային իրաւունքներու պաշտպանութեան եւ աջակցութեան համար թարմացուած Սկզբունքներու ամբողջութեան շրդ սկզբունքը կը սահմանէ բոլոր անձերուն անքակտելի իրաւունքը՝ իմանալու ճշմարտութիւնը անցեալի դէպքերուն մա–սին, նողկալի ոճրագործութիւններու վերաբերեալ, ինչպէս նաեւ այն հանգամանքներու եւ պատճառներու մասին, որոնք յանգեցուցին նշեալ դէպքերուն։ Ծշմարտութեան իրաւունքի ամբողջական եւ արդիւնաւէտ իրականացումը կ'ապահովէ կենսական կարեւոր երաշխիք ընդդէմ խախտումներու կրկնութեան։ Չորրորդ սկզբունքը կը սահմանէ, որ զոհերը եւ անոնց ընտա–նիքները ունին անժամանցելի իրաւունք իմանալու ճշմարտութիւնը այն հանգամանքներուն, որոնց պատ–ճառով տեղի ունեցած են խախտումները, ինչպէս նաեւ զոհերու ճակատագրին մասին»։

Վերջապէս, գեսպան Արսլան կրկնած է նոյն կեղծիքը այն մասին, որ Հայաստան չէ պատասխանած Թուրքիոյ 2005ի նամակին, որուն մէջ կ'առաջարկուէր «կազմել պատմաբաններէ եւ փորձագէտներէ բաղկացած համատեղ յանձնախումբ՝ 1915ի իրադարձութիւնները ուսումնասիրելու համար»։ Ասիկա սուտ է։ Հայաստան արձագանգած է՝ առաջարկելով, որ նախատեսուող յանձնախումբը քննարկէ երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող բոլոր չլուծուած հարցերը, ալլ ոչ թէ միայն Հայոց Ցեղասպանութիւնը։ Թուրքիան է, որ երբեք չէ պատասխանած։

Այժմ, երբ Հայոց Ցեղասպանութեան հարցը դարձեալ բարձրացուած է ՄԱԿի մէջ, իբրեւ յաջորդ քալլ, Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է պաշտօնապէս ներառնէ ՄԱԿի նամակը եւ թրքական ժխտողական պատասխանը՝ ՄԱԿի Մարդկային իրաւունքնե–րու խորհուրդի օրակարգին մէջ եւ հետամուտ ըլլալ փոխհատուցման եւ արդարութեան, Հայոց Ցեղասպա–նութեան մէկուկէս միլիոն զոհերուն համար։

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններուն եւ ժամերուն՝

Videotron:
HD838 կամ SD238

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Երեքշաբթի - երեկոյեան ժամը 9:00-ին (առաջին սիւրսով)

Չորեքշաբթի - կէսօրէ ետք ժամը 2:00-ին

Հինգշաբթի- երեկոյեան ժամը 6:00-ին

Շաբաթ - առաւօտեան ժամը 7:00-ին, եւ երեկոյեան ժամը 11:00-ին

Կիրակի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կէ. ժամը 4:00-ին

Երկուշաբթի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կ.կ. ժամը 5:00-ին

Ուղիղ արձակում www.icitelevision.ca
Նուիրատուութիւն կայքէլի է քնել՝ www.youcaring.com/hayhorizon

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:



facebook.com/pages/horizonweekly



@horizonweekly



horizonweekly



YouTube – Horizon Weekly TV

Award-winning film on Artsakh premieres in Brussels

BRUSSELS—On the initiative of the European Armenian Federation for Justice and Democracy (EAFJD), the Brussels premiere of “The Last Inhabitant”—an award winning film about Artsakh—took place. The screening took place at Cinéma Galeries in Brussels, Belgium on July 12. Director Jivan Avetisyan was in attendance. At the end of the film, audience members actively shared their impressions and addressed questions to the director.

“The language of art is very important in order to tell the story of the struggle of Artsakh people for their freedom to the world, in this case to the European

public. We are glad that talented directors such as Jivan Avetisian work on the topic and participate in prestigious international film festivals,” stated EAFJD President, Kaspar Karampetian.

“The Last Inhabitant,” which puts the emphasis on the effects the Nagorno Karabagh conflict has on the population, was an official entry in the 2017 Golden Globe Awards as a “Best Foreign Film” nominee. The film was presented at the 69th Cannes International Film Festival “Marché du Film.” It also received awards such as “Best Feature Film” and “Best Actor” at the Scandinavian Film Festival.

‘Europe goes Silk Road through Armenia’

YEREVAN—“China-Eurasia” Council for Political and Strategic Research, Russian-Armenian University (RAU), and “Europe Goes Silk Road” jointly organized an academic seminar titled, “Europe goes Silk Road through Armenia.” The seminar was hosted by the RAU on July 12.

During the opening ceremony of the seminar, Zhou Hongyou, Counselor of the Chinese Embassy in Armenia, spoke about the Belt and Road Initiative’s progress, results, and prospects. He also introduced the last developments in Sino-Armenian relations.

Ambassador Extraordinary and Plenipotentiary, Ex Deputy Minister of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, and Head of the Department of World Politics and International Relations of the RAU, Dr. Arman Navasardyan introduced several recommendations for improving Sino-Armenian cooperation.

In turn, Sebastian Holler, Co-Founder of “Europe Goes Silk Road,” Research Associate of the Austrian National Defence Academy, and Member of the Shabka Think Tank, spoke about the foundation of the “Europe Goes Silk Road” project.

Dr. Mher Sahakyan, the main initiator of this academic Seminar welcomed speakers

and guests, and mentioned that the main aim of the seminar was to provide a platform for researchers who do research on Belt and Road initiatives.

After the opening remarks, Sebastian Maier, Co-Founder of “Europe Goes Silk Road,” Independent Infrastructure Researcher, and former TU Wien Assistant Professor, along with Florian Krendl, Co-Founder of “Europe Goes Silk Road,” and Member of the 2050 Thinkers Club, Austria, introduced the main aims and approaches of the “Europe Goes Silk Road” project.

Sebastian Holler and Sebastian Maier spoke about preliminary results and outlook of the “Europe Goes Silk Road” Expedition.

Dr. Varuzhan Geghamyan, Assistant Professor, and Yerevan State University Director, ARDI Institute, introduced his research on Sino-Turkish relations in the 21st century.

Dr. Mher Sahakyan’s research was focused on main aims of the Belt and Road Initiative, and he also introduced several recommendations for improving Sino-Armenian Cooperation in the context of Belt and Road Initiative.

An active discussions and exchange of thoughts followed after each presentation.

Aram I visits Armenian historic spiritual sites in Turkish-occupied Northern Cyprus

NICOSIA—His Holiness Catholicos Aram I of the Holy See of Cilicia took the risk and crossed the border to Northern Cyprus occupied by Turkey and paid a visit to the Armenian historical spiritual centres.

Accompanied by Vartkes Mahtesian, Armenia’s Representative in the Cyprus Parliament, His Holiness visited the Armenian Sourp Asdvadzadzin Church, the Saint Makar Monastery the National Prelacy and the Melikian-Ouzounian School in Turkish-occupied side of Nicosia.

(Armradio)

Yerevan rules out support for U.S. sanctions against Iran

YEREVAN—The United States should not pressure Armenia to cut commercial ties to neighbouring Iran because of U.S. sanctions against Tehran, parliament speaker Ararat Mirzoyan said during a visit to Washington.

Speaking at the Atlantic Council, a Washington-based think-tank, on July 15, Mirzoyan said that the standoff between the U.S. and Iran is already having a negative impact on the Armenian economy.

“We don’t want the United States to put pressure on Armenia for joining in its Iran sanctions agenda,” the Armenian service of the Voice of America quoted him as saying. “Armenia cannot pay such a price.”

Mirzoyan argued that Iran serves as one of his landlocked country’s two conduits to the outside world due to closed borders with the two other Muslim neighbours: Azerbaijan and Turkey.

The Armenian speaker, who is a close associate of Prime Minister Nikol Pashinyan, commented on the “very interesting and heated discussion” at the Atlantic Council on his Facebook page on the morrow. “I informed American partners that our economy is suffering losses due to the sanctions against Iran and that we cannot stop buying Iranian gas,” he wrote.

Iran has supplied up to 500 million cubic meters of natural gas to Armenia annually over the past decade. The latter pays for it electricity supplied to the Islamic Republic.

Iranian officials offered to expand this swap arrangement when they held talks with Armenia’s Deputy Prime Minister Mher Grigoryan in Tehran earlier this month. Grigoryan told RFE/RL’s Armenian service last week that Yerevan is interested in boosting Iranian gas imports.

U.S. National Security Adviser John Bolton discussed the U.S. sanctions with Pashinyan during an October 2018 trip to Armenia. Bolton said Washington will be enforcing them “very vigorously” and that traffic through the Armenian-Iranian border will therefore become a “significant issue.”

In November, a team of officials from the U.S. state and treasury departments visited Yerevan to explain the sanctions to Armenia’s government and private sector. Pashinian made clear afterwards that that his government will “deepen not only economic but also political relations” with Tehran.

Meeting with Pashinyan in the Iranian capital in February, Iran’s Supreme Leader Ayatollah Ali Khamenei urged Armenia to strengthen its relationship with his country “contrary to what the United States wants.” Iranian President Hassan Rouhani likewise said after separate talks with the Armenian leader that the two neighbours will not allow any “third country” to undermine their cordial relationship.

(RFE/RL)

